

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	
2012թ. աշխատանքների հաշվետվությունը	4
2013թ. աշխատանքների ծրագիրը	5
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ	
2012թ. աշխատանքների հաշվետվությունը	8
2013թ. աշխատանքների ծրագիրը	9
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ	
2012թ. աշխատանքների հաշվետվությունը	12
2013թ. աշխատանքների ծրագիրը	13
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	
2012թ. աշխատանքների հաշվետվությունը	16
2013թ. աշխատանքների ծրագիրը	18
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	
2012թ. աշխատանքների հաշվետվությունը	19
2013թ. աշխատանքների ծրագիրը	20
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ	21
ՀՆԱՐԱՎՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ	23
<i>Հավելված 1</i>	
Հայագիտական կենտրոնի աշխատակիցների հեղինակած աշխատությունները	24
<i>Հավելված 2</i>	
Քաղաքական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցների հեղինակած աշխատությունները	27
<i>Հավելված 3</i>	
Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցների հեղինակած աշխատությունները	29
<i>Հավելված 4</i>	
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2012թ. ՀՀ պետական բյուջեից ստացված սուբսիդիայի և կատարված ծախսերի	31
<i>Հավելված 5</i>	
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին	32
<i>Հավելված 6</i>	
Այլ քաղաքականության միջոցառումների գծով կատարողական չափորոշիչներ	42
<i>Հավելված 7</i>	
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2012թ. ոչ պետական բյուջեից ստացված գումարների և կատարված ծախսերի	46

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամը կազմված է 5 կենտրոններից՝ Հայագիտական, Քաղաքական, Տեղեկատվական հետազոտությունների, Ուսումնական (որի պատասխանատվության ոլորտում է նաև Ամադուի տարածքը), Հրատարակչական, և Գործունեության սպասարկման ծրագրից, որոնցից յուրաքանչյուրի ֆինանսավորումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարություն ներկայացրած հայտերի: Հիմնադրամում աշխատում է 42 աշխատակից, որոնցից 20-ը՝ փորձագետ, 9-ը՝ հրատարակչական կենտրոնի աշխատակից (խմբագիրներ, սրբագրիչներ, թարգմանիչներ, կայքը սպասարկողներ և գրադարանավար), 13-ը՝ սպասարկող անձնակազմի աշխատակից (որոնց թվում 9 տեխնիկական աշխատող՝ պահակներ և հավաքարարներ):

Հիմնադրամի 10 աշխատակից ունի գիտական աստիճան:

2012 թվականին «Նորավանք» ԳԿՀ-ն հրատարակել է 25 ամսագիր և 5 գիրք: Հիմնադրամի փորձագետները հեղինակել և հրատարակել են 75 հոդված Հիմնադրամի և միջազգային հանդեսներում, հանդես են եկել 12 զեկույցներով գիտաժողովներում:

Հիմնադրամի փորձագետները հանդես են եկել մամլո ասուլիսներում, թերթերում, ամսագրերում, հարցազրույցներ են տվել հեռուստաալիքներին, որոնց թվում՝ Հ1, «Արմենիա», «ԱրմԵՆԿո», «Կենտրոն», Հ2, «ԱՐ», «Երկիր մեդիա» և այլն: Հիմնադրամը համագործակցում է հետևյալ կազմակերպությունների հետ.

1. ՀՀ Սփյուռքի նախարարություն,
2. «Հայռուսգազարդ» ՓԲԸ,
3. ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտե,
4. «Հիքսոս» հիմնադրամ (Շվեյցարիա),
5. Բոհումի համալսարան «Սփյուռքագիտության ինստիտուտ» (Գերմանիա),
6. «Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոն» (ՌԴ),
7. Մոսկվայի պետական համալսարան (ՌԴ),
8. «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային կազմակերպություն (ՌԴ),
9. «Դոբրոսոսեդստվո» միջազգային կազմակերպություն (ՌԴ),
10. «Եվրոպայի աշխարհաքաղաքական ֆորում» (Բելգիա),
11. Հարվարդի համալսարանի Բելֆերի առաջատար հետազոտությունների կենտրոն (ԱՄՆ),
12. Եվրոպական և արտաքին քաղաքականության հունական ինստիտուտ (Հունաստան):

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայագիտական կենտրոնում ընդգրկված է 6 աշխատակից՝ Արեստակես Սիմավորյան (կենտրոնի ղեկավար), Վահրամ Հովյան, Թամարա Վարդանյան, Տիգրան Ղանալանյան, Ռուբեն Մելքոնյան (փորձագետներ), Էդուարդ Դանիելյան (խորհրդական): Աշխատանքներին ստոցիացված գործընկերներ՝ Հակոբ Չոլաքյան (պ.գ.թ.), Վարդան Թաշչյան:

2012թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնն իրագործում է աշխատանքներ «Հայության մտավոր ռեսուրսների և կրոնադավանական հատվածների հիմնախնդիրները» ընդհանուր ծրագրի շրջանակներում:

2012թ. կատարվել են աշխատանքներ ՀՀ Սփյուռքի նախարարությունից ստացված դրամաշնորհներով, հետևյալ երկու նախագծերի իրականացման ուղղությամբ.

1. «Սփյուռքի գիտական և վերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ» (2 տարով), կատարողներ՝ Գ.Հարությունյան, Ս.Սարուխանյան, Վ.Հովյան, Ա.Սիմավորյան, Տ.Ղանալանյան: Կատարվել է հիմնարար հետազոտություն արտերկրի գիտական և փորձագիտական շրջանակներում առկա հայկական մտավոր ներուժի բացահայտման ուղղությամբ: Այդ համատեքստում աշխարհի առաջատար երկրների «ուղեղային կենտրոնների» և ակադեմիական կառույցների գործունեության մեջ ընդգրկված հայագի մասնագետներն ու գիտնականները հաշվառվել են, ըստ մասնագիտությունների, երկրների և այլ չափանիշների՝ դասակարգվել: Ներկայումս փորձարկվում և իրագործվում են համագործակցության մեխանիզմներ: «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի հետ միասին ստեղծվել է աշխատանքային խումբ արտերկրում բնակվող և աշխատող հայագի քաղաքագետների, միջազգայնագետների և սոցիալական գիտությունների մասնագետների հետ կապեր և համագործակցություն հաստատելու նպատակով: Արդյունքում՝ հոկտեմբերի 19-20-ը ՀՀ ՍՆ համատեղ կազմակերպվել է «Հայ միջազգայնագետների և քաղաքագետների գիտաժողով»: Այսօր համագործակցության մասին պայմանավորվածություններ են ձեռք բերվել 14 արտասահմանցի մասնագետների հետ, ինչի արդյունքում «Նորավանքը» հրատարակել է դրանցից 2-ի հեղինակած հոդվածները, կազմակերպել 2 օնլայն-կոնֆերանս և 3 դասախոսություն: Նախատեսվում է հետազոտության արդյունքները հրատարակել գրքի տեսքով 2013թ.:
2. «Հայ կաթողիկե և ավետարանական համայնքները Թուրքիայում. ժամանակակից միտումներ» (կատարողներ՝ Ա.Սիմավորյան, Վ.Հովյան): Հետազոտական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել է համայնքների ծագման և պատմական զարգացման ընթացքը, սակայն գլխավոր շեշտադրումը կատարվել է համայնքների արդի վիճակի և ներկայում նկատվող միտումների վրա: Դիտարկումները կենտրոնացվել են համայնքների թվաքանակի, սփռվածության, կազմակերպական կառույցների, իրավական կարգավիճակի, թուրքական

միջավայրի ազդեցության և այլ խնդիրների վրա: Հետազոտության արդյունքները հրատարակվել են գրքի տեսքով:

Կենտրոնի գործունեության արդյունքները

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 1 գիրք, 31 հոդված, մասնակցել 7 գիտաժողովի, տվել մի շարք հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ:

2013թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

2013թ. Հայագիտական կենտրոնի աշխատանքները կատարվելու են հետևյալ ծրագրային ուղղություններով.

1. Ազգային ներուժի բացահայտման, գնահատման և արդյունավետ օգտագործման շուրջ ուսումնասիրություններ

Սույն ուղղության շրջանակներում 2013թ. նախատեսվում է իրականացնել հետազոտություններ Հայության մտավոր ներուժի բացահայտման, հավաքագրման և արդյունավետ օգտագործման մեխանիզմների մշակման նպատակով: Այս տեսանկյունից ուսումնասիրություններն իրականացվելու են հետևյալ հիմնական թեմատիկ ենթաուղղություններով.

- «Սփյուռքի գիտական և վերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ» թեման ենթադրում է հաշվառել աշխարհի առաջատար երկրների «ուղեղային կենտրոնների» և ակադեմիական կառույցների գործունեության մեջ ընդգրկված հայազգի մասնագետներին ու գիտնականներին ըստ մասնագիտությունների, երկրների և այլ չափանիշների: Ստացված տվյալների հիման վրա մշակել ցանցային աշխատանքների մեխանիզմներ և համատեղ իրագործել Հայաստանի և հայկական հանրության շահերից բխող նախագծեր: Նախատեսվում է հետազոտության արդյունքները հրատարակել գրքի տեսքով 2013թ.: Կատարողներ՝ Գ.Հարությունյան, Ս.Սարուխանյան, Վ.Հովյան, Ա.Սիմավորյան, Տ.Ղանալանյան:
- *Սփյուռքի հայագիտական կենտրոնների ներուժի գնահատում:* Այսօր Սփյուռքում գործում են տասնյակ հայագիտական կենտրոններ: Դրանք միմյանցից տարբերվում են՝ ըստ թեմատիկ հետաքրքրությունների բնագավառների, ֆինանսավորման աղբյուրների և այլն: Առայսօր իրականացվել են առանձին հայագիտական կենտրոնների վերաբերյալ հետազոտություններ: Սակայն հայագիտական կենտրոնների ամբողջական հետազոտություն՝ նրանց ներուժի բացահայտման և գնահատման նպատակով, դեռևս իրականացված չէ, ինչը կարևոր նշանակություն ունի նրանց հետ կապերն ու համագործակցությունն ամրապնդելու և այլ առումներով:

Կատարողներ՝ Է.Դանիելյան, Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, Տ.Ղանալանյան, Թ.Վարդանյան (իրականացման ժամանակացույցը տե՛ս Հավելվածում):

• **Վրացացած հայությունը. ներուժ և ինքնություն.**

Այսօր չկա վրացացած հայերին առնչվող խնդիրների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն. չկան ոչ հիմնարար հետազոտություններ, ոչ վերլուծական հոդվածներ, ոչ դաշտային հետազոտություններ և այլն: Չկա տեղեկատվական բազա, որտեղ պետք է ներկայացված լինեին վրաց հասարակության ներսում կշիռ ունեցող վրացացած հայ անհատներ՝ քաղաքական, բիզնես, գիտական և այլ ոլորտներում: *Նպատակն է՝* հետազոտել Վրաստանի հայության վրացացած խմբերին ու առանձին անհատներին:

Խնդիրներն են՝

- տեղեկատվական բազայի ստեղծման նպատակով բաց նյութերի հայթայթում, համակարգում,
- վրացական միջավայրում սոցիալական բարձր դիրքերի հասնելու մեխանիզմների համակողմանի քննություն,
- վրացացած հայերի հետ հնարավոր համագործակցության կամ տարվելիք աշխատանքների համար կիրառելի մեխանիզմների մշակում:

Կատարող՝ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ Թ.Վարդանյան

2. Ժամանակակից Թուրքիայի իսլամացված շերտերը և էթնիկ պարկերը

Տարածաշրջանային գերտերության կարգավիճակին հավակնող Թուրքիան ներկայում վարում է իր ազդեցության ընդլայնմանը միտված արտաքին և ռազմական քաղաքականություն: Դրան որոշակիորեն նպաստում են միջազգային իրադրությունը, Թուրքիայի աշխարհագրական դիրքը և վերջին տարիներին նկատվող տնտեսական վերելքը: Դրա հետ մեկտեղ, Թուրքիայում շարունակում են իրենց գոյությունը պահպանել այդ հասարակությանն ավանդաբար բնորոշ մի շարք խնդիրներ, որոնք, վերջին շրջանում տարբեր գործոնների ազդեցության տակ սրվելով, կարող են ոչ միայն խոչընդոտել այդ երկրի արտաքին քաղաքական հավակնությունների իրականացմանը, այլև երկիրը կանգնեցնել ներքին քայքայման կամ տարածքային մասնատման իրական սպառնալիքի առջև:

Այս ֆոնին վերջին տասնամյակում ի հայտ եկող՝ Թուրքիային ներհատուկ խնդիրները որոշակիորեն առնչվում են ՀՀ-ին ու Հայությանը: Մասնավորապես, ավելի են ակտուալանում իսլամացված հայերին, հույներին, վրացիներին և ասորիներին վերաբերող խնդիրները: Դրանք հետզհետե խորանում են և չեն շրջանցում ոչ մի ասպարեզ՝ մի շարք տեսանկյուններից դառնալով սպառնալիք Թուրքիայի ազգային անվտանգության համար: Պատահական չէ, որ Թուրքիայում «էթնիկ ինքնության ճգնաժամ» կոչվող երևույթը դարձել է հասարակական-քաղաքական շրջանակներում քննարկվող կարևորագույն թեմաներից մեկը:

Թուրքիայի իսլամացված ազգային խմբերին առնչվող ժամանակակից միտումների և գործընթացների վերաբերյալ ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի գիտնականների ու վերլուծաբանների կողմից առաջսօր կատարվել են սահմանափակ թվով ուսումնասիրություններ և դաշտային հետազոտություններ, որոնք հիմնականում կրել են տեսական բնույթ: Մինչդեռ տարածաշրջանային մի քանի

դերակատարներ ձեռնարկում են կոնկրետ քայլեր այդ խմբերի միջոցով իրականացնելու սեփական ազգային քաղաքականությունը՝ տալով դրան կիրառական նշանակություն: Օրինակ, Թուրքիայի հյուսիս-արևելքում բնակվող իսլամացված վրացիներին սեփական ինքնության վերադարձնելու քաղաքականություն է վարում Վրաստանը: Իսկ Հայաստանում վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ, հարկ է փաստել, դեռևս չկա անգամ տեղեկատվական բազա, ինչը լրջագույն բացթողում է մեր պետության համար:

Երկրորդը էթնիկ փոքրամասնությունների կարևորագույն հարցն է: Փաստ է, որ Թուրքիայի էթնիկական կազմի վերաբերյալ պատկերացումներն առաջին հերթին կառուցվում են պետական և վիճակագրական ուսումնասիրություններ կատարող թուրքական կառույցների կողմից կատարված գնահատականների հիման վրա: Սակայն տարբեր նկատառումներից ելնելով՝ բերվում են իրարամերժ և հակասական վիճակագրական տվյալներ այդ երկրի բնակչության ազգային կազմի վերաբերյալ: Եթե քրդերի և հայերի դեպքում կան որոշ ուսումնասիրություններ, ապա ժամանակակից Թուրքիայի այլ էթնիկ խմբերի վերաբերյալ փորձագիտական գնահատականներ մեծ մասամբ չեն տրվել:

Նպատակն է՝ Թուրքիայի իսլամացված շերտերի և էթնոկրոնական խմբերի համակողմանի հիմնարար հետազոտությունը:

Խնդիրներն են՝

- Թուրքիայի էթնոկրոնական փոքրամասնությունների վերաբերյալ համակարգված տեղեկատվական բազայի ստեղծում,
- այդ խմբերին առնչվող ժամանակակից միտումների ուսումնասիրություն,
- Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության վրա դրանց ազդեցության գնահատում,
- համակողմանի վերլուծության միջոցով այդ շերտերի հետ տարվելիք աշխատանքների համար կիրառելի մեխանիզմների մշակում՝ ելնելով ՀՀ ռազմավարական նպատակներից և շահերից:

Կատարողներ՝ Ռ.Մելքոնյան, Ա.Սիմավորյան:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Արտերկրում բնակվող հայ փորձագետների հետ ցանցային աշխատանքների վարման համար հաստիքի հատկացում (մոտ 4 մլն դրամ):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Քաղաքական հետազոտությունների կենտրոնում աշխատում են 5 փորձագետ՝ Սևակ Սարուխանյան (կենտրոնի ղեկավար), Արա Մարջանյան, Սերգեյ Սարգսյան, Կարեն Վերանյան, Արաքս Փաշայան: Աշխատանքներին ասոցիացված գործընկերներ՝ Սերգեյ Գրիչյան (տ.գ.դ.), Արամ Սաֆարյան (պ.գ.թ.), Հրաչյա Արզումանյան (ֆ.գ.թ.), Աշոտ Թավադյան (տ.գ.դ.), Աշոտ Թևիկյան (տ.գ.թ.), Սերգեյ Մինասյան (պ.գ.թ.), Միխայիլ Աղաջանյան, Սիմոն Սարաջյան (PhD – Բելֆերի կենտրոն), Էրիկ Ասադուրյան (PhD – Worldwatch Institute), Գևորգ Միրզայան (պ.գ.թ. – Экономический институт):

2012Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնն ըստ 2012 թվականի համար հաստատված աշխատանքային ծրագրի իրականացնում է հետազոտություններ «ՀՀ տարածաշրջանային և էներգետիկ անվտանգության խնդիրները» նախագծի շրջանակներում:

2012 թվականին աշխատանքներն ընթացել են մի քանի ենթաուղղություններով: Դրանք են.

1. Ադրբեջանի սոցիալական և տնտեսական համակարգերի ուսումնասիրություն
2. Տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրները
3. Միջազգային և տարածաշրջանային էներգետիկ անվտանգություն
4. Հայաստանը միջազգային վարկանիշային համակարգերում:

Կենտրոնի աշխատակիցները ներգրավված են «Միջուկային Թուրքիա» հետազոտական ծրագրում, որն իրականացվում է «Նորավանք» ԳԿՀ այլ կենտրոնների հետ համագործակցությամբ: Տվյալ նախագծի շրջանակներում ավարտվել և հրատարակվել են մի քանի հոդվածներ:

Կենտրոնը, համաձայն «Նորավանք» ԳԿՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետի հանձնարարության, կատարել է հիմնարար հետազոտություն «Միջուկային և ջերմային էներգետիկայի հարաբերակցությունը ՀՀ-ում» թեմայով:

Կենտրոնի գործունեության արդյունքները

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 1 գիրք, որը թարգմանվել է ռուսերեն և անգլերեն, 25 հոդված, մասնակցել են գիտաժողովների, սվել մի շարք հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ: Կենտրոնի աշխատակիցների հեղինակած նյութերի մասին տեղեկատվությունը տես [Հավելվածում](#):

2013Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

«ԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԴԻ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ»

Ընդհանուր հետազոտական ծրագիր

Հայաստանի Հանրապետությունը և Հարավային Կովկասը գտնվում են աշխարհաքաղաքական նախագծերի համագործակցության և, միևնույն ժամանակ, պայքարի գոտում: Մի կողմից՝ ակտիվանում են ինտեգրացիոն գործընթացները Եվրոպական միության ուղղությամբ, մյուս կողմից՝ տարածաշրջանում ակտիվ դերակատարում է փորձում ստանձնել Եվրասիական միությունը, որի հիմնադրման մասին հայեցակարգային որոշում են ընդունել Ռուսաստանը, Ղազախստանը և Բելառուսը:

Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասում ակտիվ դերակատարում ունեն տարածաշրջանում առաջատար քաղաքական, ռազմական և տնտեսական ներուժ ունեցող Թուրքիան և Իրանը, որոնք սեփական տեսլական ունեն Հարավային Կովկասի ապագայի վերաբերյալ:

Այս ամենը տարածաշրջանը դարձնում է ակտիվ համագործակցության և, միևնույն ժամանակ, պայքարի թատերաբեմ տարբեր պետությունների և կազմակերպությունների միջև:

Նպատակը

Որպես արդյունք՝ նախատեսվում է ստեղծել առանձին դրույթների, սեղմագրերի, հոդվածների և հոդվածաշարերի զանգված՝ նվիրված տարածաշրջանային ինտեգրացիայի ծրագրերի, Հայաստանի և հարևան պետությունների համար դրանց դրական ու բացասական հետևանքների, ինչպես նաև զարգացման ներուժի գնահատմանը: Աշխատանքների հաջող ընթացքի դեպքում հնարավոր կլինի ամբողջացնել ստացված նյութը միասնական հրատարակության տեսքով:

Հետազոտական նախագիծը կրում է հիմնականում կիրառական բնույթ և նվիրված է լինելու գլոբալ ու տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում ՀՀ ներգրավման հնարավոր ձևերին, հեռանկարներին ու արդյունքներին, ընթացող գործընթացների աշխարհաքաղաքական ու քաղաքակրթական հենքին և հեռանկարներին:

Հաշվի առնելով «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետների մասնագիտացումը՝ հետազոտական նախագիծը ներառում է հետևյալ թեմաների ուսումնասիրությունը.

- 1. Հայաստանը և աշխարհաքաղաքական, աշխարհափոփոխական և քաղաքակրթական ինտեգրացիոն ծրագրերը (հեղափոխողներ՝ Գագիկ Հարությունյան, Սևակ Սարուխանյան, Արա Մարջանյան, ասոցիացված հեղափոխողներ՝ պ.գ.թ.Արամ Սաֆարյան, պ.գ.դ. Աշոտ Թավադյան, պ.գ.թ. Աշոտ Թևիկյան, ֆ.գ.թ. Հրայր Արզումանյան)**

Թեմայի թիրախային խնդիրն է լինելու՝ 1) ուսումնասիրել ներկայիս ինտեգրացիոն ծրագրերի, առաջին հերթին՝ աշխարհաքաղաքական և քաղաքակրթական բաղադրիչը՝ ներկայացված դրանց գոյացման պատմական և աշխարհաքաղաքական

ներքին օրինաչափությունների ծիրում, 2) Հայաստանի Հանրապետության հնարավոր դիրքորոշումները դրանց նկատմամբ՝ ելնելով Հայաստանի ազգային շահերից, երկրի և ժողովրդի զարգացման հեռանկարից:

2. Ռուսաստանը, Իրանն ու Թուրքիան Հարավային Կովկասի էներգետիկ շուկայում (հեղազոտողներ՝ Սևակ Սարուխանյան, Արա Մարջանյան)

Թեմայի նպատակն է. ա) ուսումնասիրել Հարավային Կովկասի հարևան պետությունների ակտիվ մասնակցությունը տարածաշրջանային էներգետիկ շուկայում, քանզի վերջինս խաղում է կարևոր դեր շահերի ձևավորման և առաջխաղացման գործում, բ) ուրվագծել տարածաշրջանային ինտեգրացիոն ներուժն առաջին հերթին էլեկտրաէներգետիկայի, էներգախնայողության ու վերականգնվող էներգետիկայի ոլորտներում տարածաշրջանային տարբեր աշխարհաքաղաքական ինտեգրացիոն սցենարների դեպքում:

3. «Եվրոպական հարևանություն» ծրագիրը և ՀՀ էներգետիկ համակարգը. խնդիրներն ու հեռանկարները (հեղազոտողներ՝ Արա Մարջանյան, Սևակ Սարուխանյան)

Թեման նվիրված է ԵՄ «Եվրոպական հարևանություն» ծրագրի էներգետիկ բաղադրիչին, որը պետք է հիմք ստեղծի Հայաստանի և Հարավային Կովկասի էլեկտրաէներգետիկ համակարգերը եվրոպականին ինտեգրելու ճանապարհին: Սակայն ՀՀ-ի համար ծրագիրն ունի բավական լուրջ թերություններ՝ կապված Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայկական էլեկտրաէներգետիկ համակարգի փաստացի շրջափակման հետ: Թեմայի ուսումնասիրությունը պետք է հանգեցնի համապատասխան հետևությունների և առաջարկների՝ ուղղված ՀՀ էներգետիկ համակարգը եվրոպականին մասամբ ինտեգրելու մեխանիզմների մշակմանը:

Սույն թեմայի մյուս կարևոր բաղադրիչը էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում մոտեցումների, նորմատիվ բազայի ու օրենսդրության տեղական և միջազգային բազաների միջև ներդաշնակեցման խնդրի ուսումնասիրությունն է և առաջնայնությունների ուրվագծումը:

4. Հարավային Կովկասը և եվրասիական նշանակության տրանսպորտային նախագծերը (հեղազոտող՝ Սևակ Սարուխանյան)

Թեման նվիրված է տարածաշրջանային տրանսպորտային նախագծերի ուսումնասիրությանը, քանի որ դրանք, մի կողմից, ուղղված են նախկին հաղորդակցության ճանապարհների վերացմանն ու հետխորհրդային տարածքի վերջնական քայքայմանը որպես միասնական տրանսպորտային հանգույց, մյուս կողմից՝ նոր տրանսպորտային նախագծերի իրականացմանը, որոնք Հարավային Կովկասը պետք է դարձնեն արևմտյան տրանսպորտային համակարգի անքակտելի մաս:

5. Ռազմաքաղաքական գործընթացները եվրասիական տարածաշրջանում և դրանց նշանակությունը Հարավային Կովկասի համար (հեղազոտող՝ Սերգեյ Սարգսյան)

Թեման նվիրված է լինելու ռազմաքաղաքական իրավիճակի ուսումնասիրությանը եվրասիական տարածաշրջանի այն հատվածում, որտեղ զարգացումներն անմիջական

ազդեցություն ունեն ՀՀ անվտանգության համակարգի վրա: Հիմնական ուշադրությունը դարձվելու է ՀԱՊԿ և ՆԱՏՕ հարաբերությունների խնդիրներին, Շանհայի համագործակցության կազմակերպության զարգացմանը, ԱՄՆ, Թուրքիայի և Իրանի քաղաքականությանը:

6. Եվրասիական և Եվրոպական միությունների տեսլականը Սևծովյան և Կասպից շրջանի պետություններում (հետազոտող՝ Սերգեյ Սարգսյան)

Հետազոտական ուղղությունն ուսումնասիրելու է տարածաշրջանային պետությունների վերաբերմունքն ու քաղաքականությունն (*policy research*) ինտեգրացիոն երկու նախագծերի վերաբերյալ՝ Եվրոպական միություն և Եվրասիական միություն:

Թեման ներառում է առաջին հերթին ռազմաքաղաքական հարթության հարցերի ուսումնասիրությունը:

7. Եվրոպան և Եվրասիական տարածաշրջանը. վիճակագրական և համեմատական վերլուծություններ (հետազոտող՝ Կարեն Վերանյան)

Ուղղության նպատակն է պարզել Եվրոպայի միության և Եվրասիական միության հնարավոր անդամ պետությունների տնտեսական, սոցիալական, ռազմական և քաղաքական ներուժը և դրանց հնարավոր նշանակությունն ինտեգրացիոն գործընթացների ընթացքի և արդյունքի վրա: Վիճակագրական հետազոտությունների հիմնական նպատակն է վերլուծել այս կամ այն ինտեգրացիոն գործընթացից սպասելիքները Հայաստանի և հարևանների համար:

8. Էթնոդավանական գործընթացներն Ադրբեջանում (հետազոտող՝ Արաքս Փաշայան)

Թեման նվիրված է էթնոդավանական գործընթացներին Ադրբեջանում, որոնք անմիջականորեն կարող են ազդել Ադրբեջանի՝ որպես Հարավային Կովկասում տնտեսական պոտենցիալով ամենաուժեղ պետության, ինտեգրացիոն նախագծերի վերաբերյալ մոտեցումների վրա: Ադրբեջանն այս դեպքում վերցված է նաև որպես Սևծովյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանները միավորող կարևոր հանգույց:

Նախագիծը ենթադրում է շարունակական բնույթ և որպես արդյունք ունենալու է համապատասխան ուսումնասիրությունների հրապարակումը և ներկայացումը 2012թ.: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով թեմայի պահպանվող արդիականությունը՝ այն կշարունակվի նաև 2014թ., նպատակ ունենալով հետազոտական աշխատանքները դարձնել ավելի համապարփակ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տեղեկատվական հեղափոխությունների կենտրոնում ընդգրկված է 8 աշխատակից՝ Գագիկ Հարությունյան (կենտրոնի ղեկավար), Աննա Ժամակոչյան (ղեկավարի տեղակալ), Արփինե Մանուսյան, Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան, Սուրեն Մարտիրոսյան (I կիսամյակում), Սամվել Մարտիրոսյան, Սոնա Մանուսյան, Անուշավան Բարսեղյան (փորձագետներ): Ասոցիացված գործընկերներ՝ Ժաննա Անդրեասյան (սոց.գ.թ.), Նվարդ Մելքոնյան (սոց.գ.թ., դոցենտ), Սամվել Մանուկյան (սոց.գ.թ.), Միհրան Դաբաղ (Բոխումի համալսարանի պրոֆեսոր):

2012թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2012թ. կենտրոնը կատարել է աշխատանքներ «Հայաստանի տեղեկատվական ներքին ռեսուրսների ուսումնասիրություն» և «Մեր հաղթանակները» (4-րդ հատոր) հիմնական ծրագրային ուղղություններով: Առաջին ծրագիրն իրականացվում է ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից մրցութային կարգով տրամադրված երկամյա դրամաշնորհի միջոցներով՝ «ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրություն» նախագծի շրջանակներում: Նախագիծը նպատակ ունի ուսումնասիրել ՀՀ տեղեկատվական տարածքում շրջանառվող հիմնական իդեոլոգեմները՝ Հայաստանի ավանդական և ցանցային մեդիաների բովանդակության վերլուծության և կարծիք ձևավորողների արժեքային դիրքորոշումների հետազոտման միջոցով:

Ծրագիրն ընթացել է նախագծով պլանավորված օրացույցին համապատասխան: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և ուսումնասիրվել են թեմային առնչվող տեսական գրականությունը, մշակվել են հետազոտության մեթոդաբանությունը և գործիքները, ավարտվել է դաշտային փուլը (փորձագիտական հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, ԶԼՄ կողմորման գործընթաց), ինչպես նաև փորձագիտական հարցազրույցների հիման վրա կատարվող վերլուծությունը: Այժմ ընթանում է քանակական տվյալների վերլուծությունը, սկսվել են համապարփակ վերլուծության և հաշվետվության նախապատրաստման աշխատանքները:

Հրատարակվել է «Մեր հաղթանակները» քառահատորի 4-րդ հատոր:

Միաժամանակ, ՏՀ կենտրոնը շարունակում է ՀՀ տեղեկատվական անվտանգության (ՏԱ) աջակցությանն ուղղված քայլեր ձեռնարկել: Այս ուղղությամբ իրականացվում են ադրբեջանական հայալեզու հեռուստահաղորդումների մոնիթորինգ և ՏԱ հարցերի շուրջ վերլուծական աշխատանքներ:

ՏՀ կենտրոնը փորձում է մեդիառեսուրսների ուսումնասիրության նոր նախագծերի կազմման և իրագործման հնարավորություններ գտնել: Մասնավորապես, մշակվել է «Հարևանների մասին պատկերացումները Հարավային Կովկասի երկրների սոցիալական մեդիաներում» նախագիծը, որը հիմք կհանդիսանա 2013-ից սկսվող նոր ծրագրի համար:

Կենտրոնի գործունեության արդյունքները

2012թ. լույս է տեսել կենտրոնի աշխատակիցների 19 հոդված: Կենտրոնի փորձագետները մասնակցել են մի շարք գիտաժողովների, տեղական և արտասահմանյան աշխատանքային քննարկումների, սեմինարների, տվել են հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ:

2013թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»
Ընդհանուր հետազոտական ծրագիր

Նպատակը և առարկան

ՏՀ կենտրոնի 2013թ. ծրագրի նպատակն է Հայաստանի տեղեկատվական անվտանգության համատեքստում ուսումնասիրել ՀՀ և տարածաշրջանի երկրների՝

- տեղեկատվական հոսքերի բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները
- տեղեկատվական սուբյեկտների քաղաքականության առանձնահատկությունները
- տեղեկատվական դաշտում տեղի ունեցող գործընթացների միտումները:

Օբյեկտը

Նպատակի իրականացման համար որպես ուսումնասիրության օբյեկտ կհանդիսանան՝

- ՀՀ ավանդական ՁԼՄ-ն
- Հայաստանի առցանց լրատվամիջոցները և վիրտուալ սոցիալական ցանցերը
- տարածաշրջանի առցանց լրատվամիջոցները և վիրտուալ սոցիալական ցանցերը:

Նախագծերը

Ծրագրի շրջանակներում 2013թ. ՏՀ կենտրոնը նախատեսում է իրականացնել հետևյալ նախագծերը.

- I. շարունակել և ավարտել 2011թ. սկսված «ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրություն» նախագիծը,
- II. սկսել «Հարևանների մասին պատկերացումները Հարավային Կովկասի երկրների նոր մեդիաներում» երկամյա նախագիծը:

ՆԱԽԱԳԻԾ 1. ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԻԴԵՈԼՈԳԵՄՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(նախագիծը համաֆինանսավորվում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից տրված դրամաշնորհի միջոցներով)

Նպատակները

1. Հետազոտության հիմնարար նպատակն է բացահայտել մեդիաների և կարծիք ձևավորողների կողմից Հայաստանի տեղեկատվական տարածքում ձևավորվող արժեքները և իդեոլոգեմները և դասակարգել դրանք ՀՀ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից:
2. Կիրառական նպատակներն են.
 - ՀՀ տեղեկատվական տարածքում գերակայող արժեքների և փոխակերպման միտումների, ինչպես նաև դրանց՝ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայե-

ցակարգին համապատասխանության վերաբերյալ տվյալների շուրջ առաջարկներ ներկայացնել տեղեկատվական ոլորտը համակարգող պետական և ազգային կառույցներին, ինչը թույլ կտա նրանց մշակել տեղեկատվական քաղաքականության ռազմավարություն:

- Վարկանիշավորել մեդիաները՝ ըստ ՀՀ տեղեկատվական անվտանգության դրույթներին համապատասխան չափանիշի:
- Հետազոտության ընթացքում մշակված մեթոդաբանությունը և մեդիաների վարկանիշավորման մեխանիզմը հիմք ծառայեցնել Հայաստանում համանման պարբերական ուսումնասիրությունների իրականացման և տարածվող արժեքների ցուցանիշների մշտական մոնիթորինգի համար:

Հիմնական խնդիրները

1. Առանձնացնել, խմբավորել և տիպաբանել համակարգաստեղծ ու հանրայնորեն նշանակալի արժեքներն ու իդեոլոգեմները:
2. Վերլուծել մեդիայի և կարծիք ձևավորողների կողմից արժեքների տարածման մեխանիզմները:
3. Բացահայտել տարածվող արժեքների հնարավոր հակասությունները և դրանց պատճառները:
4. Համադրել Հայաստանի տեղեկատվական տարածքում գերակայող արժեքները հանրության տեղեկատվական (այդ թվում՝ հոգևոր, հոգեբանական և մտավոր) անվտանգության հայեցակարգի հիմնադրույթների հետ:
5. Ուսումնասիրել առանձին մեդիաների և կարծիք ձևավորողների դերն այս կամ այն տիպի արժեքների տարածման գործում:

Ակնկալվող արդյունքները

Նախագծի ավարտին մենք կունենանք ՀՀ ավանդական և առցանց մեդիայի բովանդակության, տեղեկատվական քաղաքականության առանձնահատկությունների գիտական պատկերը և ՀՀ տեղեկատվական դաշտում վերջին 2 տարիներին տեղի ունեցող գործընթացների միտումները: Բացի այդ, կառանձնացնենք լրատվամիջոցների վարկանիշավորման չափանիշները և կփորձենք մեր տվյալների համաձայն վարկանիշավորել ուսումնասիրված լրատվամիջոցները: Աշխատանքն ամբողջությամբ կամփոփվի հրատարակվող գրքում:

Նախագիծն իրականացնողները

Ղեկավար՝ Գագիկ Հարությունյան (ՏՀ կենտրոնի ղեկավար), հետազոտողներ՝ Աննա Ժամակոչյան, Արփինե Մանուսյան, Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան, Սամվել Մանուկյան, Սամվել Մարտիրոսյան, Սոնա Մանուսյան, ասոցիացված հետազոտող՝ Սամվել Մանուկյան:

ՆԱԽԱԳԻԾ 2. ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐ ՄԵԴԻԱՆԵՐՈՒՄ

Նպատակը

Հարավային Կովկասի երկրներում կարծիքի առաջատար սոցցանցային հարթակներում հարևանների շուրջ ձևավորվող ու տարածվող պատկերացումների ուսումնասիրության միջոցով բացահայտել տարածաշրջանի ընդհանուր ապագայի ընկալումներն ու ակնկալիքները և դրանցից բխող հնարավոր հետևանքները:

Հիմնական խնդիրները

1. Պարզել Հարավային Կովկասի երեք երկրներից յուրաքանչյուրում կարծիքի առաջատար սոցցանցային հարթակներում հետևյալ հարցերի շուրջ ինտերնետային հանրության ընկալումները.

- հարևանների բնութագրիչները և կերպարները, պատկերացումների ձևավորման հիմքերը
- հարևանների հետ հարաբերությունների բնույթը
- հարևանների հետ հաղորդակցման սեփական ռազմավարությունը
- սեփական երկրի զարգացման հարացույցները. արդյո՞ք դրանում առկա է տարածաշրջանի զարգացման կոմպոնենտը
- տարածաշրջանի երկրների խաղաղության և ինտեգրացիայի խոչընդոտների ընկալումները
- տարածաշրջանի երկրների խաղաղության և ինտեգրացիայի պոտենցիալը և ուղիները
- տարածաշրջանի զարգացման հեռանկարները, Հարավային Կովկասի ապագայի ընկալումը (ինտեգրացիոն հնարավորությունները):

2. Համեմատել Հարավային Կովկասի երեք երկրների կարծիքի առաջատար սոցցանցային հարթակներում հարևանների և տարածաշրջանի ընդհանուր ապագայի շուրջ առկա հանրային ընկալումները և ակնկալիքները:

3. Տալ Հարավային Կովկասի երեք երկրների կարծիքի առաջատար սոցցանցային հարթակներում հարևանների շուրջ առկա պատկերացումների հնարավոր հետևանքների փորձագիտական գնահատական:

Ակնկալվող արդյունքները

Նախագծի ավարտին (2014թ.) ակնկալվում է հրատարակել աշխատություններ Հարավային Կովկասի երեք երկրների կարծիքի առաջատար սոցցանցային հարթակներում հարևանների շուրջ ձևավորվող ու տարածվող պատկերացումների և տարածաշրջանի ընդհանուր ապագայի ընկալումների ու ակնկալիքների մասին, որը կներառի նաև առկա իրավիճակի փորձագիտական գնահատականներ:

Նախագիծն իրականացնողները

Ղեկավար՝ Գագիկ Հարությունյան (ՏՀ կենտրոնի ղեկավար), հետազոտողներ՝ Աննա Ժամակոչյան, Արփինե Մանուսյան, Ժաննա Անդրեասյան, Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան, Սամվել Մարտիրոսյան, Սոնա Մանուսյան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Տիգրան Հարությունյան:

2012թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական ծրագրերի և Համահայկական համալսարանի հայեցակարգի համատեքստում՝ 2012թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացվել է ամառային դպրոց՝ «Գլոբալ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական մարտահրավերները» թեմայով, առկա և հեռավար դասախոսությունների տեսքով: Դասախոսություններին զեկուցումներով հանդես են եկել արտասահմանցի առաջատար փորձագետներ (դասախոսությունների և դասախոսների ցանկը՝ Աղյուսակ 1-ում):

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 9 սեմինար, որոնցից 2-ը՝ առցանց (Աղյուսակ 2): Սեմինարներին մասնակցել են առաջատար փորձագետներ, ՀՀ-ում օտարերկրյա դիվանագիտական կորպուսների ներկայացուցիչներ:

2012թ. աշխատանքներ են տարվել ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համագործակցելու ուղղությամբ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ ուսումնական տարում «Նորավանք» ԳԿՀ-ում անցկացնել «Տեղեկատվական անվտանգություն» խորագրով հատուկ դասընթաց ԳԿՄԿ ուսանողների համար:

2012թ. սկսվել է ՀՀ ուղեղային կենտրոնների (ՈւԿ) հետազոտական ծրագիրը: 2013թ. ամբողջությամբ կկատարվեն և կամփոփվեն ծրագրի արդյունքները:

Անցկացվել է Գիտական-փորձագիտական խորհրդի 9 նիստ՝ նվիրված ընթացիկ աշխատանքների և հաշվետվությունների քննարկմանը:

Աղյուսակ 1

«Գլոբալ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական մարտահրավերները» խորագրով դասախոսությունների և դասախոսների ցանկ

Թիվ	Թեմաներ	Ձեկուցողներ
1.	Հիշողություն և Հայոց ցեղասպանություն. գլոբալ մարտահրավերներ	Միհրան Դաբաղ, Սփյուռքի և Ցեղասպանության հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, Բոխում, Գերմանիա
2.	Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Էրդողանի օրոք	Գևորգ Միրզայան, ՌԴ ԱՄՆ և Կանադայի ին-տի առաջատար գիտաշխատող, «Էքսպերտ» ամսագրի հատուկ թղթակից, վերլուծաբան, ՌԴ
3.	ՆԱՏՕ-ն և Մերձավորարևելյան նոր գործընթացները	Մարատ Տերտերով, Եվրոպական աշխարհաքաղաքական ֆորումի տնօրեն, Բրյուսել, Բելգիա

Թիվ	Թեմաներ	Զեկուցողներ
4.	Աշխարհաքաղաքական կենտրոնները. աշխարհում նրանց դերն ու նշանակությունը	Սերգեյ Գրինյան, Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, Մոսկվա, ՌԴ
5.	Ցանցային պատերազմներ. ԱՄՆ նոր ռազմավարությունը	Սերգեյ Գրինյան, Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, Մոսկվա, ՌԴ
6.	Ռազմաքաղաքական իրավիճակը. էությունը և հիմնական գործոնները: Աշխարհաքաղաքական իրավիճակի գնահատման մեթոդիկան	Սերգեյ Գրինյան, Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, Մոսկվա, ՌԴ

Աղյուսակ 2

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2012թ. անցկացրած սեմինարների և գիտաժողովների ցանկ

Թիվ	Թեմաներ	Զեկուցողներ
1.	Դավանական և էթնիկ փոքրամասնությունները տարածաշրջանում. մեխանիզմների և մեթոդների մշակում	Մոսկվայի պետական համալսարանի լաբորատորիայի վարիչ Ա.Գասպարիշվիլի, «Նորավանք» ԳԿ գործադիր տնօրեն Գ.Հարությունյան, «Նորավանք» ԳԿ փոխտնօրեն Ս.Սարուխանյան, «Նորավանք» ԳԿ Հայագիտական կենտրոնի ղեկավար Ա.Սիմավորյան
2.	Տարածաշրջանային և մերձավորարևելյան աշխարհաքաղաքական զարգացումների արդի խնդիրները	Եվրոպական աշխարհաքաղաքական ֆորումի նախագահ Մ.Տերտերով, «Նորավանք» ԳԿ գործադիր տնօրեն Գ.Հարությունյան, «Նորավանք» ԳԿ փոխտնօրեն Ս.Սարուխանյան
3.	Բարձր տեխնոլոգիաների ներդրման նախադրյալները Հայաստանում	սոցիոլոգ-հետազոտող Ս.Մանուկյան
4.	Հայաստանի երիտասարդության աշխարհայացքային համալիրները ՀՀ ռազմավարական զարգացման խնդիրների համատեքստում	սոցիոլոգ-հետազոտող Ս.Մանուկյան
5.	Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների իրականացման մեխանիզմները	Ֆերնան դե Վարեն (Մուրդոկի համալսարան, Ավստրալիա)
6.	ՀՀ-ԵՄ հարաբերությունների հեռանկարը	ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Զ.Ռաչինսկի, Գ.Հարությունյան
7.	Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարը	Կ.Միքայելյան, Ս.Սերայդարյան

Թիվ	Թեմաներ	Զեկուցողներ
8.	Քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողով (ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ)	«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ.Հարությունյան, «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ Ա. Մարջանյան
9.	Հայաստանին ուղղված մարտահրավերները	«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ.Հարությունյան

2013թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

2013թ. նախատեսվում է կազմակերպել դասընթացներ (նաև հեռավար), քննարկումներ:

«Նորավանք» ԳԿՀ-ում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ կիրականացվի մագիստրատուրայի ուսանողների համար նախատեսված «Տեղեկատվական անվտանգություն» խորագրով հատուկ դասընթաց:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հրատարակչական կենտրոնում ընդգրկված է 8 աշխատակից՝ Լուսինե Բաղրամյան (կենտրոնի ղեկավար), Գևորգ Հայրապետյան, Խոնարհիկ Քարաուղանյան, Լիլիթ Մելիքսեթյան, Ռուզաննա Մանուկյան, Տաթևիկ Քարաուղանյան, Անահիտ Հարությունյան, Ժաննետա Գալստյան (գրադարանավար):

2012թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է հետևյալ ամսագրերի և գրքերի հրատարակությունը.

Ամսագրեր

- 21-րդ դար (6 համար)
- 21-й век (5 համար)
- 21st Century (2 համար)
- Գլոբուս (12 համար)

Գրքեր

- Արա Մարջանյան, Ադրբեջանական Հանրապետություն. «վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները, Երևան, 2012:
- Ara Marjanyan, “Virtual” Demographics of the Azerbaijani Republic, Yerevan, 2012.
- Ара Марджанян, Азербайджанская Республика: особенности «виртуальной» демографии, Ереван, 2012.
- Մեր հաղթանակները (հեղինակային խմբի ղեկավար՝ Սուրեն Մարտիկյան), հատոր IV, Երևան, 2012:
- Արեստակես Սիմավորյան, Վահրամ Հովյան, Հայ կաթողիկե և ավետարանական համայնքները Թուրքիայում. ժամանակակից միտումներ, Երևան, 2012:

Հրատարակություններն առաքվել են 100-ից ավելի կազմակերպությունների և անհատների, ինչպես նաև բաշխվել Հիմնադրամի սեմինարների մասնակիցներին:

Հիմնադրամի կայքն ունի **մոտ 2000** մշտական բաժանորդ, որոնք ստանում են առաքվող նյութերը 3 լեզվով: Կայքում տեղադրվել է մոտ 600 նյութ, որոնք առաքվել են բոլոր բաժանորդներին:

Կայքի այցելուների թիվը 2012թ. ընթացքում, ըստ CIRCLE.AM-ի տվյալների

	Visits (այցելու)	Pageviews, Hits (էջերի թերթում)
Total (Ընդհանուր)	153.204	324.890

2013թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

2013թ. նախատեսվում է հրատարակել «Նորավանք» ԳԿՀ ամսագրերը և 3 գիրք:

Ամսագրեր

- 21-րդ դար (6 համար)
- 21-й век (5 համար)
- 21st Century (2 համար)
- Գլորուս (12 համար)

Գրքեր

- Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգը (հեղ.՝ Արա Մարջանյան)
- Սփյուռքի գիտական և վերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ (հեղինակային խումբ)
- ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմները (հեղինակային խումբ):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Աջակցել, որպեսզի «ԳԼՈՐՈՒՍ» ամսագիրն (պարբերականությունը՝ տարեկան 12 համար, հրատարակվել է 34 համար) ընդգրկվի ՀՀ ԲՈՀ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2012թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործունեության ապահովման» ծրագրի գծով կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. «Նորավանք» ԳԿՀ-ն հայտարարել է աուդիտի մրցույթ, որի հաղթող է ճանաչվել «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ն և նրա հետ կնքվել է պայմանագիր «Նորավանք» ԳԿՀ-ի 2011թ. գործունեության և ֆինանսական հաշվետվության աուդիտի անցկացման համար: «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ն 2012թ. փետրվարի 9-ից մինչև փետրվարի 24-ը իրականացրել է նշված աուդիտը և «Նորավանք» ԳԿՀ 2011թ. գործունեության և ֆինանսական հաշվետվության համար տվել աուդիտորական եզրակացություն, որը «Նորավանք» ԳԿՀ 02.03.2012թ. N36 գրությամբ ներկայացվել է «Նորավանք» ԳԿՀ հոգաբարձուների խորհրդին:

Ըստ տրված աուդիտորական եզրակացության՝ «Նորավանք» ԳԿՀ 2011թ. գործունեությունը և ֆինանսական հաշվետվությունն ամբողջապես համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2009թ. դեկտեմբերի 24-ի «Հիմնադրամների կողմից հրապարակվող և ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացվող հաշվետվության ձևը, լրացման կարգը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու մասին» N319-Ն հրամանի, «Նորավանք» ԳԿՀ-ն 2012թ. մարտի 30-ին այդ հրամանով հաստատված ձևի հաշվետվություն է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրին՝ կցելով նաև նշված աուդիտորական եզրակացությունը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նշված աուդիտորական եզրակացությունը հրատարակվել է «Գոլոս Արմենիի» օրաթերթի 22.03.2012թ. N29(20242) համարում, ինչպես նաև տեղադրվել 23.03.2012թ. www.noravank.am կայքում և 29.03.2012թ. www.azdarar.am կայքում:

2. ՀՀ բյուջեից «Նորավանք» ԳԿՀ-ն 2012թ. ստացել է **95,0** մլն դրամ (*Հավելված 4*), որից կատարված ծախսերի մեծությունների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են սույն հաշվետվությամբ սահմանված ձևերով՝ Հ-2 և ԱՀ-1 (*Հավելվածներ 5, 6*), ընդ որում՝ տարեկան ծախսերն ըստ հոդվածների կազմում են՝

- աշխատավարձ և պարտադիր սոց. ապահովության վճարներ – **76644,0** հազ. դրամ,
- մասնագիտական և գիտաուսումնական ծառայությունների գծով ծախսեր – **990,0** հազ. դրամ,
- հրատարակչական ծախսեր – **10000,0** հազ. դրամ,
- ուսումնական և կրթական նախագծերի իրականացում (սեմինարներ) – **1050,0** հազ. դրամ
- գրասենյակային և տնտեսական ծախսեր – **600,0** հազ. դրամ
- կոմունալ ծառայություններ – **1026,0** հազ. դրամ,
- տրանսպորտային ծախսեր – **1490,0** հազ. դրամ,
- կապի ծառայության ծախսեր – **1990,0** հազ. դրամ,
- Աուդիտի գծով ծախս – **840,0 հազ.** դրամ
- Շենքի և ավտոմեքենայի գույքահարկ – **370,0 հազ.** դրամ

Ընդամենը՝ **95000,0** հազ. դրամ:

Մանրամասն ծախսային ուղղությունները ներկայացված են կցված հաշվետվության ձևերում:

3. Բացի վերը նշված հաշվետվություններից, 2012թ. յուրաքանչյուր ամիս ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների վերաբերյալ ՀՀ կառավարության աշխատակազմի հետ կազմվել է ՀՀ կառավարության 24.12.2003թ. N1937-Ն որոշման 8.1 կետով պահանջվող և ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2010թ. N346-Ն հրամանով հաստատված ձևի տրամադրված սուբսիդիաների գծով կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտեր, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ:

4. 2012թ. տարեսկզբին «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կառուցվածքին համապատասխան իրականացվել է կենտրոնների և ծրագրերի 2012թ. գործունեության ուղղությունների, հաստիքների և աշխատողների վարձատրության ճշգրտում: Դրա հիման վրա իրականացվել են աշխատանքային անձնակազմի հետ անհրաժեշտ համապատասխան պայմանագրային փոփոխությունների հրամանագրումը և նրանց հետ համապատասխան անհրաժեշտ աշխատանքային պայմանագրերի փոփոխությունների կնքումը, որի համար կազմվել են շուրջ **35** աշխատանքային պայմանագրերի փոփոխություններ:

Տարեսկզբին «Նորավանք» ԳԿՀ հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված «Նորավանք» ԳԿՀ 2012թ. բյուջեն հաշվի առնելով՝ «Նորավանք» ԳԿՀ-ն պայմանագիր է կնքել ՀՀ կառավարության աշխատակազմի հետ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների համար՝ հաշվի առնելով նաև սեփական գործունեությունից ստացվող այլ եկամուտները:

ՀՀ ֆինանսների նախարարության հետ ճշգրտելով՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի կազմվել է «Նորավանք» ԳԿՀ 2012թ. ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների հաշվին գնումների պլանը և այն 23.01.2012թ. N16 գրությամբ ներկայացվել է լիազոր մարմին: Ելնելով լիազոր մարմին (ՀՀ ֆինանսների նախարարություն) ներկայացված 2012թ. գնումների պլանից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N168-Ն որոշման պահանջներից՝ «Նորավանք» ԳԿՀ 2012թ. նախատեսված տպագրական աշխատանքների համար 07.02.2012թ. հայտարարվել է ՀՀ ֆինանսների նախարարության և «Գնումների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հաստատված ՇՀԱԸԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների շրջանակային մրցույթ: Մրցույթին մասնակցել է 42 կազմակերպություն և հաղթող է ճանաչվել «Գասպրինտ» ՍՊԸ-ն, որի հետ 2012թ. փետրվարի 17-ին կնքվել է պայմանագիր, իսկ շրջանակային մրցույթի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

2012թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը ձեռք է բերել **1,790,500** դրամի ապրանքանյութական արժեքներ, այդ թվում՝ սարքավորումներ **1,120,000** դրամի (ոչ բյուջեից ստացված միջոցների հաշվին), նյութեր և այլ ապրանքներ **670,500** դրամի: Ձեռք է բերվել **1,120,000** դրամի համակարգչային տեխնիկա:

Ոչ բյուջեից «Նորավանք» ԳԿՀ-ն 2012թ. ստացել է **20,252** մլն դրամ: Ստացված միջոցների և կատարված ծախսերի մասին տե՛ս Հավելված 7-ում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Դիտարկել Ամաղուի տարածքը վարձակալման հանձնելու կամ վաճառելու հնարավորությունները:

ՀՆԱՐԱՎՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ

1. Մշակել և իրագործել մեթոդիկա, որը թույլ կտա հաշվարկել ՀՀ կայունության գործոնը ներքին և արտաքին սպառնալիքների պարագայում: Աշխատանքը կարող է կատարվել Ռազմավարական հետազոտությունների և կանխատեսումների կենտրոնի (ՌԴ) հետ համատեղ:
2. Իրագործել «Հայաստանի նշականությունը ԱՄՆ-ի համար» պայմանական անվանումը կրող նախագիծ, որտեղ կներկայացվեն աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, տնտեսական այն բնութագրիչներ, որոնք կարևորվում են ԱՄՆ ազգային շահերի տեսանկյունից: Աշխատանքը կարող է կատարվել նման աշխատանքների փորձառություն ունեցող *Բելֆերի* կենտրոնի (ԱՄՆ) հետ համատեղ, աշխատանքները գնահատվում են իրենց կողմից 150 հազար ԱՄՆ դոլար, իրագործման ժամկետը՝ 18 ամիս:
3. Իրագործել «Հայաստանի նշականությունը ՌԴ-ի համար» պայմանական անվանումը կրող նախագիծ, որտեղ կներկայացվեն աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, տնտեսական այն բնութագրիչներ, որոնք կարևորվում են ՌԴ ազգային շահերի տեսանկյունից: Աշխատանքը կարող է կատարվել Ռազմավարական հետազոտությունների և կանխատեսումների կենտրոնի (ՌԴ) հետ համատեղ, աշխատանքները գնահատվում են իրենց կողմից մոտ 100 հազար ԱՄՆ դոլար, իրագործման ժամկետը՝ 18 ամիս:
